ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2024 թ. փետրվարի 2-ի թիվ 225/1 որոշմամբ

ՀՌՀ ՌԵԿՏՈՐ Է.Մ. ՍԱՆԴՈՅԱՆ

ԿԱՐԳ

Հայ-Ռուսական համալսարանի Հանրակրթական դպրոցի ընդունման, հաստատությունից տեղափոխման և ազատման, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող սովորողների կազմակերպման գործընթացի ինչպես նաև կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտական և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով կարգավորվում են դպրոցական տարիքի երեխայի (այսուհետ՝ սովորող) ՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ հաստատություն) ընդունման, հաստատությունից տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող սովորողների կրթության կազմակերպման գործընթացի հետ կապված՝ սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և հաստատության միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Սովորողի ընդգրկումը (ընդունումը)

2.1. Սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է «Հանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

2.2. Սովորողի ընդունելությունը հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի և հաստատության ու ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» օրենքով և հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

2.3. Սովորողին հաստատություն ընդունելու հրամանին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հաստատություն ընդունված սովորողի տվյալները հաստատության տնօրենը կամ տնօրենի հրամանով նշանակված պատասխանատու աշխատակիցը մուտքագրում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կողմից վարվող «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»:

2.4. Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը): Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, և տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն

իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:

2.5. Բացառությամբ սույն կարգի 2.4-րդ կետում նշված դեպքի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաների ուսուցման լեզուն գրական հայերենն է:

2.6. Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

2.7. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս՝ առաջնահերթությունը տրվում է տվյալ հաստատությունում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին. տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին ինչպես նաև՝ տվյալ հաստատության աշխատակիցների երեխաներին:

2.8. Սովորողի ընդունելությունը հաստատության առաջին դասարան մեկնարկում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսումնական պլանով նախատեսված ուսումնական պարապմունքների ավարտից երկու շաբաթ հետո՝ առաջին աշխատանքային օրը:

2.9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ երեխային հաստատություն ընդունելու մասին գրավոր դիմումը ծնողի (նրա

օրինական ներկայացուցչի) կողմից հաստատություն չներկայացվելու դեպքում երեխայի հաստատություն ընդունվելու հայտը չեղարկվում է:

3. Սովորողի տեղափոխումը

3.1. Հայաստանի Հանրապետության տարածքում հաստատությունից հաստատություն տեղափոխումը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան՝ ԿՏԱԿ կողմից վարվող «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» միջոցով: Ուսումնական տարվա ընթացքում սովորողի բացակայությունների ամփոփման համար սահմանված ժամկետից հետո նույն բնակավայրում հաստատությունից հաստատություն սովորողի տեղափոխությունն արգելվում է: Սովորողի տեղափոխումն իրականացվում է սովորողի հաջորդ դասարան կամ հաջորդ կրթական աստիճան փոխադրվելու մասին մանկավարժական խորհրդի որոշումից հետո:

3.2. Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից հանրակրթական ուսումնական հաստատություն՝ սովորողի տեղափոխությունը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով՝ պահպանելով սույն կարգի 4 և 6.1 կետերի պահանջները:

3.3. Սույն կարգի 4-րդ կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Սույն կարգի 4 կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության անհամապատասխանության դեպքում՝

սովորողի ուսումնառությունը կազմակերպվում է մեկ դասարան բարձր (բացառությամբ 9-րդ դասարանի) կամ ցածր (կրթության տևողությունը 12 տարուց ավելի լինելու դեպքում):

3.4. Առանց կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է սույն կարգի 6.1 և 6.2 կետերի պահանջներին համապատասխան:

3.5. 1-4-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ հաստատությունում (դասարանում) սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս ուսումը շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում՝ համաձայն անհատական ուսուցման պլանի:

3.6. Ուսումնառության ընթացքում առնվազն 5 տարի անընդմեջ այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ հաստատություններում (դասարաններում) սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս կարող են ուսումը շարունակել օտար լեզվով ուսուցմամբ համապատասխան դասարաններում՝ դրանց առկայության դեպքում:

4. Հաստատություն սովորողի ընդգրկման եվ տեղափոխման համար անհրաժեշտ փաստաթղթերը

4.1. Սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

4.1.1. դիմում՝ ուղղված տնօրենին,

4.1.2. սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

4.1.3. լուսանկար՝ 3x4 չափսի, «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում», սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4.1.4. նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաև ընթացիկ և կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

4.1.5. սույն կարգի 6.1 կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

5. Սովորողի ազատումը հաստատությունից

5.1. Սովորողի ազատումը հաստատությունից կատարվում է՝

5.1.1. ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա,

5.1.2. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

5.2. Սովորողի ազատումը կարող է կատարվել նաև սույն կարգի 2.1 կետով սահմանված ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և տվյալ հաստատության միջև կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) կողմից չպահպանվելու դեպքում:

6. Սահմանված ժամկետից ուշ սովորողի հանրակրթության մեջ ընդգրկումը

6.1. «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

6.1.1. մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 8 տարին լրանալու դեպքում՝ 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով,

6.1.2. մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 9-ից մինչև 15 տարին լրանալու դեպքում կամ մինչև մեկ տարի ուսումն ընդհատած սովորողը՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր՝ գիտելիքների գրավոր ստուգման արդյունքում,

6.1.3. կրթական 3-րդ աստիճանում հաստատություն չհաճախած սովորողը (մինչև 17 տարին լրանալը), հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում է իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան,

6.1.4. 19 տարին չլրացած սովորողը կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից,

6.1.5. Կրթության վերաբերյալ փաստաթղթերի համաձայն հաջորդ դասարան փոխադրված և ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումն ընդհատած սովորողը մինչև ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը հաստատություն դիմելու դեպքում՝ ուսումը շարունակում է համապատասխան դասարանում՝ պայմանով, որ առաջին կիսամյակի և տարեկան գնահատականները որոշվելու են ուսումնական տարվա ավարտին կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով 120-200 ժամ բացակայած սովորողի համար նախատեսված լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով, որոնց արդյունքների վերաբերյալ Նախարարությունը կարող է իրականացնել մոնիթորինգ:

6.2. Սույն կարգի 6.1 կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի, 11-րդ և 13-րդ կետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա

անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով սովորողի փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար:

6.3. Մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող), հաստատություն չհաճախած անձը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված էքստեռն (դրսեկություն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի պահանջներին համապատասխան հիմնական կրթության վկայական ստանալուց հետո կարող է ուսումը շարունակել 10–րդ դասարանում կամ նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում:

6.4. Մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 19 տարին լրացած (լրացող), հաստատություն չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումն ընդհատած սովորողը հանրակրթական հիմնական ծրագրերը կարող է յուրացնել ինքնակրթությամբ կամ հեռավար ուսուցման ձևով և Նախարարության սահմանած կարգով ստանալ հիմնական կրթության վկայական և (կամ) միջնակարգ կրթության ատեստատ:

7. Սովորողի՝ դասարանից դասարան փոխադրումը եվ ավարտումը

7.1. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով:

7.2.2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա՝ ուսուցչի կողմից:

7.3. Միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ Հաստատության հայեցողությամբ և սահմանած ժամանակացույցի համաձայն: Քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդական միավորումների կողմից: Փոխադրական քննությունները գնահատվում են՝

7.3.1. գրավորը՝ 20 միավորային համակարգում,

7.3.2. բանավորը՝ 10 միավորային համակարգում:

7.4. Փոխադրական գրավոր քննությունները 8-20 (բանավորի դեպքում՝ 4-10) միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Փոխադրական գրավոր քննությունները 1-7 (բանավորի դեպքում՝ 1-3) միավոր գնահատված սովորողը վերաքննություններ է հանձնում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

7.5. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

7.6. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական բոլոր քննություններից 4-10 (բանավորի դեպքում) և 8-20

(գրավորի դեպքում) միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

7.7.12-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի ավարտական դասարան) հունվար կամ հունիս ամիսներին ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

7.8.Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները՝ ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում: Տարեկան գնահատականները որոշվում են կիսամյակային գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում:

7.9.«Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդվելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

7.10. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9-10 (բանավորի դեպքում) կամ 18-20 (գրավորի դեպքում), 4-րդ դասարանում տարեկան և գիտելիքների ստուգումից 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-10 (բանավորի դեպքում) կամ 18-20 (գրավորի դեպքում) միավոր գնահատված սովորողները պարգևատրվում են Նախարարության գովասանագրով:

7.11. 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 (գրավորի դեպքում) միավոր

գնահատված սովորողները ստանում են «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

7.11.1. առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը,

7.11.2. միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը:

8. Ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացումը

8.1. 4-րդ դասարանում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ «Մայրենի» (գրավոր) և «Մաթեմատիկա» (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաև «Ռուսաց լեզու» (բանավոր):

8.2. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:

8.3. 4-րդ դասարանի՝ տարեկան 1-3 կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքերում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, սովորողը հանձնում է վերաքննություն՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ Հաստատության մեթոդմիավորումների կազմած առաջադրանքների հիման վրա:

8.4. Գիտելիքների ստուգման ենթակա առարկայից տարեկան 1-3 գնահատված լինելու դեպքում՝ սովորողը չի մասնակցում տվյալ առարկայից գիտելիքների ստուգմանը:

8.5. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում նաև գիտելիքների ստուգման ենթակա առարկաներից գնահատականներ նշանակելու համար:

8.6.4-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

8.6.1. սույն կարգի 8.5 կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը չորս և ավելի է,

8.6.2. չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-3 միավոր:

8.7.9-րդ դասարանում անցկացվում են ավարտական քննություններ հետևյալ առարկաներից.

8.7.1. Հայոց լեզու (կենտրոնացված՝ գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր)։ Հատուկ հանրակրթական դպրոցներում սովորողները քննություններ հանձնում են իրենց Հաստատություններում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը։ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների, անհրաժեշտության դեպքում ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) ընտրության՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

8.7.2. Մաթեմատիկա (կենտրոնացված՝ ԳԹԿ-ի կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր) ։ Հատուկ հանրակրթական դպրոցներում սովորողները քննություններ հանձնում են իրենց Հաստատություններում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը։ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների,

անհրաժեշտության դեպքում ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) ընտրության՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

8.7.3. Գրականություն (բանավոր),

8.7.4. Օտար լեզու (Ռուսերեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր),

8.7.5. Բնագիտություն («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներ՝ սովորողի ընտրությամբ) 2022-2023 ուսումնական տարվանից սկսած՝ լաբորատոր փորձերի հիման վրա՝ բանավոր:

8.7.6. Հայոց պատմություն (բանավոր),

8.7.7. Ֆիզկուլտուրա (նորմատիվների հանձնում),

8.7.8. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր), իսկ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները՝ իրենց մայրենի լեզվից և գրականությունից (բանավոր):

8.8. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Ռուս գրականություն» առարկայի, իսկ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար իրենց մայրենի լեզվի և գրականության առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդմիավորումների կողմից:

8.9. «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական քննությունն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ 10 միավորային համակարգում:

8.10. 9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը չորսն է, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում (բացառությամբ սույն կարգի 8.7 կետի 1-ին և

2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

8.11. Սույն կարգի 8.7 կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված առարկաների վերաքննությունները անցկացվում են կենտրոնացված՝ Նախարարի կողմից հաստատված քննական կենտրոններում:

8.12. 9-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր:

8.13. 12-րդ դասարանում հունվար կամ հունիս ամիսներին անցկացվում են պետական ավարտական քննություններ հետևյալ առարկաներից.

8.13.1. Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր)

8.13.2. Մաթեմատիկա (գրավոր),

8.13.3. Հայոց պատմություն (գրավոր),

8.14. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր), իսկ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները՝ իրենց մայրենի լեզվից և գրականությունից (բանավոր):

8.15. Եթե 12-րդ դասարանի սովորողը առողջական խնդրի պատճառով հունվար ամսին չի ներկայացել պետական ավարտական որևէ քննության, ապա տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

8.16. Հունվար ամսին պետական ավարտական որևէ քննությունից անբավարար գնահատվելու դեպքում 12-րդ դասարանի սովորողը տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

8.17. Պետական ավարտական որևէ քննական առարկայից անբավարար գնահատված լինելու կամ քննությանը չներկայանալու դեպքում 2-րդ կիսամյակում

տվյալ առարկան տվյալ սովորողի համար դառնում է պարտադիր ուսումնասիրության առարկա:

8.18. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկաների թեստերը կազմվում են ռուսերենով:

8.19. Ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

8.20. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար «Ռուս գրականություն» առարկայի, ազգային փոքրամասնությունների դասարանների համար իրենց մայրենի լեզվի և գրականության առաջադրանքները կազմվում են Հաստատության մեթոդմիավորումների կողմից:

8.21. «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգարքն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ որևէ քննաշրջանի ընթացքում:

8.22. 12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ հունիս ամսին նախատեսված քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

8.23. 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր:

8.24. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ» կամ «Երկրաչափություն» կամ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկա» առարկայի ավարտական, պետական ավարտական

քննություններին և հանձնում են վերաքննություն՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

8.25. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան և «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

8.26. 9-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում չի մասնակցում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ավարտական քննություններին և հանձնում է վերաքննություն՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

8.27. 12-րդ դասարանների սովորողը «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում չի մասնակցում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննությանը և հանձնում է վերաքննություն՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

8.28. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

8.29. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու», «Հայ գրականություն», կամ «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներն ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում, սովորողի ցանկությամբ՝ ծնողի (նրա

օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող է գրվել՝ «չի ուսումնասիրել» բառերը: Տվյալ դեպքում սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում՝ «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների և 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների ավարտական, պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

8.30. 19 տարին լրացած՝ առնվազն մեկ ուսումնական առարկայից տարեկան 1-3 կամ քննական 1-7 միավոր (գրավորի դեպքում) գնահատված (այդ թվում՝ վերաքննության արդյունքներով), ավարտական, պետական ավարտական քննություններին չմասնակցած 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները դուրս են մնում Հաստատությունից:

8.31. Սույն կարգի 8.30 կետով սահմանված դեպքերում սովորողները, հաջորդ ուսումնական տարվանից սկսած, տարեկան 1-3 կամ քննական 1-7 միավոր (գրավորի դեպքում) գնահատված ուսումնական առարկայի(ների) քննությունը(ները) կարող են հանձնել դրսեկության (էքստեռն) ձևով՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված էքստեռն (դրսեկություն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի պահանջներին համապատասխան, ստանալ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ:

8.32. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի արական սեռի սովորողները, Հաստատությունից դուրս մնալու, ավարտական, պետական ավարտական քննություններին չմասնակցելու կամ քննական որևէ առարկայից 1-7 (գրավորի դեպքում) միավոր (այդ թվում՝ վերաքննության արդյունքներով) գնահատված լինելու դեպքում իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ.

8.32.1. ընթացիկ տարվա ամառային զորակոչին զինվորական ծառայության մեկնածները՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում,

8.32.2. ծառայության ընթացքում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում, ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում,

8.32.3. զորացրվելուց անմիջապես հետո իր ուսումնառած Հաստատությունում՝ ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում:

8.33. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններում (այդ թվում՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից) առավելագույնը 3 առարկայից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, նրա հանձնած վերաքննությունների արդյունքներով: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են Հաստատության համապատասխան մեթոդմիավորման կողմից:

8.34. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

8.34.1. չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ

8.34.2. ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

8.35. Վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է 8.32 կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

8.36. Սույն կարգի 8.32 կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմաններով փոխադրվող կամ սույն կարգով սահմանված վերաքննություններ հանձնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

8.37. Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները՝ սովորողների փաստացի առարկայական գիտելիքների մասին, Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

8.38. 2-9-րդ դասարանների սովորողները, ուսումնական տարվա առաջին կիսամյակում որևէ ուսումնական առարկայից 1-3 գնահատված լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանով սահմանված հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի պահանջներին համապատասխան, ներգրավվում են տվյալ առարկայի պարապմունքներում՝ տվյալ առարկայից իրենց գնահատականը առնվազն չորս միավորի հասցնելու համար:

8.39. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին սովորողի ծնողին (նրա օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասղեկը՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

8.40. 2-8-րդ, 10-12-րդ դասարանների չորս և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները (մինչև 19 տարին լրանալը) չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

8.41. 9-րդ դասարանի հինգ և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողը (մինչև 19 տարին լրանալը) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

9. Ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրումը

9.1.Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

9.2.2-12-րդ դասարանների սովորողների բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողի հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում՝ ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

9.3.2-11-րդ դասարաններում որևէ կիսամյակում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողների բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողների կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Տվյալ կիսամյակի կիսամյակային գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն: Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների թեմաներն ընտրվում են տվյալ կիսամյակի ուսումնական նյութերից:

9.4.2-11-րդ դասարաններում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողների բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողների բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են տվյալ ուսումնական տարվա երկու կիսամյակների ուսումնական նյութը ներառող լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

9.5.12-րդ դասարանի առաջին կիսամյակում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողի բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողը մինչև հունվար ամսին անցկացվող պետական ավարտական քննությունների սկիզբը լրացուցիչ քննություններ է հանձնում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:

9.6.12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողի բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողը լրացուցիչ քննություններ հանձնում է այն առարկաներից, որոնք ընտրել է:

9.7.2-8-րդ, 10-11-րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ դասարաններում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողների բաց թողած դասերի ժամաքանակը 200-ից ավելի լինելու դեպքում սովորողները չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

9.8.12-րդ դասարանում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողի բաց թողած դասերի ժամաքանակը 200-ից ավելի լինելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը: 9-րդ և 12-րդ դասարանների 19 տարին լրացած սովորողները դուրս են մնում Հաստատությունից:

9.9. Բոլոր դասարանների քննական և ստուգողական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդմիավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով: Դրանք հաստատվում են Հաստատության տնօրենի կողմից:

9.10. Հաստատության տնօրենը հաստատում է նշված քննությունների ժամանակացույցը և տեղեկացնում Նախարարությանն ու լիազոր մարմնին: Քննություններին կարող են մասնակցել Նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ները):

9.11. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները: